DOI:10.56653/18290361-2024.14-41

Մարիամ Օհանյան

«Օրբելի Եղբայրների Տուն-Թանգարան» ՊՈԱԿ
orbelimuseum@mail.ru

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՆ. ԱՆԻԻ ՀՆԱԴԱՐԱՆԸ*

Հիմնաբառեր. Հովսեփ Օրբելի, Անի մայրաքաղաք, Բագրատունիների թագավորություն, հնագիտություն, Անիի պեղումները, Անիի հնադարանը, թանգարանագիտություն:

Ներածություն

Հայ ժողովրդի պատմության մեջ Անին ունեցել է անգնահատելի նշանակություն՝ որպես միջնադարյան մշակույթի հատուկ օրինակ, որպես քաղաքային, աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետության, մշակույթի կազմավորման ու զարգացման մի կարևորագույն օրրան: Գիտական աշխարհի ճանաչմանը վաղուց արժանացած միջնադարյան հայ մշակույթի այս հազվագյուտ թանգարանը ներկայումս դուրս է Հայաստանի սահմաններից, սակայն շարունակում է մնալ հայ ժողովրդի մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը: Անիին նվիրված մեր այս աշխատանքը նպատակ ունի հնարավորիս լուսաբանել հայ ժողովրդի պատմական անցյալում այնքան կարևոր նշանակություն ունեցող այդ օջախի մշակութային պատկերը և Հովսեփ Օրբելու կատարած աշխատանքը, որը ձևավորեց Օրբելուն որպես հնագետ և որտեղ դրսևորվեցին թանգարանային գործի կազմակերպման նրա բացառիկ ունակությունները: Ուստի այս առումով շատ կարևոր ենք համարում հայոց հնամյա մայրաքաղաքի պատմական, մշակութային, քաղաքակրթական դերի արժևորումը, անիական ժառանգության հետագա ուսումնասիրությունը և դրա ներկայացումը հայ և համաշխարհային հանրությանը:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Անիի հնագիտական ժառանգությունը, մեծանուն գիտնականի գործունեությունը Անիի հնագիտական արշավի ընթացքում, Անիի հնադարանի հիմնադրման աշխատանքները՝ որպես հայկական առաջին թանգարաններից մեկի, որը հիմք հանդիսացավ Հայաստանում հետագա թանգարանային գործի կազմակերպման հարցում:

* Ստացվել է 01.07.2024, ուղարկվել է գրախոսման 16.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

Անիի պեղումները

Միջնադարյան Հայաստանի ոչ մի քաղաք թերևս այնքան հանրահայտ չէ գիտական գրականության մեջ, ինչպես Անին: Բացի նրա մասին եղած մատենագրական առատ աղբյուրներից, որոնք վերաբերում են քաղաքի ծաղկուն շրջանին, գրականության մեջ կարելի է հանդիպել ուղեգրությունների, նկարագրությունների և ուսումնասիրությունների, որ գրել են անմարդաբնակ դարձած քաղաքի մասին ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա այցելուները: Այն հետաքրքրությունը, որ առաջացրին գիտական աշխարհում նշված նյութերը և Բագրատունիների երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի ավերակները, խթանեցին Անիի հնագիտական սիստեմատիկ ու լուրջ ուսումնասիրությունների սկիզբը:

Պատահական չէ, որ քաղաքի պատմության և ընդհանուր մշակութային ժառանգության ուսումնասիրությունը հայագիտության մեջ հաճախ առանձին անունով «անիագիտություն» է կոչվում: Այս բնագավառի բազմաթիվ երախտավորներից մեկը Նիկողայոս Մառն է, որի գլխավորած պեղումների շնորհիվ (1891-1893, հատկապես 1904-1917 թթ.) Անիի ավերակների ուսումնասիրման գործը դրվեց գիտական հիմքերի վրա, երբ նրա նախաձեռնությամբ սկսվեցին պեղումները, որին տարբեր ժամանակներում մասնակցել են Թորոս Թորամանյանը, Հովսեփ Օրբելին, Սմբատ Տեր-Ավետիսյանը, Տարագրոս Տեր-Վարդանյանը, Աշխարբեկ Քալանթարը, Նիկոլայ Տոկարսկին և ուրիշներ:

Հայերեն արձանագրությունների ժամանակակից գիտական մեթոդներով հավաքելու և հրատարակելու պատմությունը սերտորեն կապված է Անի քաղաքի ավերակների պեղման աշխատանքների հետ:

Հենց առաջին իսկ տարին, պեղումներից հետո Ն. Մառը այցելում է նաև Անիի մերձակայքի հուշարձանները և զբաղվում հայերեն արձանագրություններով, որոնցից մի քանիսն անմիջապես հրատարակում է: Մինչև իր կյանքի վերջն էլ Մառը չդադարեց անդրադառնալ հայերեն արձանագրությունների ուսումնասիրության գործին: Նա իր աշակերտ-աշխատակիցների մեջ աշխատանքի բաժանում էր կատարել ըստ վերջիններիս գիտական հետաքրքրությունների և ունակությունների, դրա հետևանքով էլ հայերեն արձանագրությունների հավաքման և դրանց՝ կորպուսի ձևով հրատարակման գործը հանձնարարվեց Հովսեփ Օրբելուն (Դիվան հայ վիմագրության, Պ. 1. Անի քաղաք /Կազմ.՝ Հ. Ա. Օրբելի, Պրակի խմբ.՝ Բ. Ն. Առաքելյան 1965, 23):

Օրբելին Առաքելոց եկեղեցու ներսի արձանագրությունները ճիշտ վերարտադրելու համար՝ աշխատում էր գիշերները՝ գրերը կարդում էր թեք լույսի օգնությամբ: Տեղի բնակիչներն այդ գիշերային լույսը կապում էին ‹‹Անիի ոգու›› հետ: Նա վերծանում ու հավաքում էր Անի քաղաքի վիմական արձանագրությունները: Առաքելոց եկեղեցու գավթում ներսի արձանագրությունները ճիշտ վերծանելու համար միակ հեշտ միջոցը գիշերը լապտերի լույսով աշխատելն էր: Նա լապտերով լույսը թեք սահեցնում էր վիմագրված պատի վրա և կարդում արձանագրված տառերը (Վրույր 1964, 36-38):

Աշխատանքը խնամքով ավարտելուց հետո պատրաստվեց հրատարակութ-

յան, սակայն Անիի արձանագրությունների բովանդակությունը իրենց բացատրական մասով Ակադեմիայի տպարանում էին, արդեն կապված էին տպագրական երեսները, երբ հեղեղվեց տպարանը և Հ. Օրբելու աշխատանքը մնաց կիսատ:

Օրբելի եղբայրներից կրտսերը՝ Հովսեփ Օրբելին ծնվել է 1887 թ. մարտի 20-ին Քութայիսի քաղաքում: Ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի երրորդ արական գիմնազիան: 1904 թ. ընդունվել է Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը:

1907 թ. ընդունվում է համալսարանի նաև Արևելյան լեզուների ֆակուլտետը: Սակայն, նվիրվելով արևելագիտությանը, նա չթողեց դասական բանասիրությունը, որը դիտում էր որպես մի անհրաժեշտ աստիճան՝ արևելագիտական առարկաների տիրապետման ճանապարհին:

Շատ գիտելիքներ է ձեռք բերել նա համալսարանի լսարաններում, սակայն իսկական բարձրագույն կրթություն ստացել է թերևս ոչ այնքան Նևայի ափին, որքան Անիում:

Օրբելին Ն. Մառի սիրելի աշակերն էր: Նա անխոնջ ու ժրաջան աշխատեց Անիում և դարբնեց իր միտքն ու գիտելիքները ուսումնասիրությունների ու հետազոտությունների այդ լայն ասպարեզում:

1906 թ. ամռանը Օրբելին առաջին անգամ Անի եկավ, մասնակցելու քաղաքամայր Անիի պեղումներին: Օրբելու համար Անիի պեղումները հնագիտական հիանալի դպրոց են եղել: Այդ արշավներից նա ստացել է նյութի և նրա մեկնաբանման վերաբերյալ խորը գիտելիքներ: Անիի հուշարձանների դիտումները ծնեցին մի շարք նոր ու կարևոր գաղափարներ, որոնք շուտով դրվեցին Առաջավոր Ասիայի մշակույթին նվիրված նրա աշխատությունների հիմքում:

Դառնալով Նիկողայոս Մառի ամենամերձավոր աշխատակիցը նա այլ պարտականությունների հետ մեկտեղ տնօրինում էր Անիի հնադարանը: Վերջինս հիմնվել էր մասնավոր միջոցների շնորհիվ: Սկզբում հնադարանի համար հարմարեցված էր այն շենքը, որը 11-րդ դարում դարձել էր մզկիթ (Մանուչե մզկիթ): 1906 թ. հաշվետվության մեջ Մառը նշում է. «Վերջապես, շատ էին Անիի թանգարանի մաքրման, կարգի բերման, հնությունների նկարագրման ու տեղադրման աշխատանքները: Սակայն այստեղ ճարվեց այն ամենը, ինչ անհրաժեշտ էր: Իսկ այն, ինչ արված է, ձեռք է բերվել շնորհիվ նրա, որ այս տարի ես ունեի հիանալի աշխատակիցներ՝ նկարիչ Պոլտորացկի և ուսանող Օրբելի, որոնք առանց ձեռքերը ծալելու՝ թանգարանում աշխատում էին ոչ միայն ցերեկները, այլ երբեմն նաև գիշերները»:

1908 թ. հուլիսի 20-ի՝ Օլգա Օրբելուն ուղղված նամակում նա գրում է. «…Բացված դագաղում գտանք 5–6 տարեկան աղջկա մարմին՝ մետաքսե շրջազգեստով, որի տակ կա քուղ, լայնագոտի, որը, հավանաբար, խորհրդանշական նշանակություն ունի, ուստի, ես ենթադրում եմ, որ մահացածը աղջիկ է: Զգեստը շատ յուրահատուկ է և շատ գեղեցիկ, կարմիր թելով է կարված, թևքերին՝ արմունկից վերև, հիանալի ոսկեթելով ասեղնագործած է վագրի և առյուծի պատկերներ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ նա ունի իշխանական կամ արքայական ծագում:

Առավոտվա ժամը 5–ն է: Երեկ ստիպված ընդհատեցի նամակս, քանի որ հայտնվեցին տարբեր թափառաշրջիկներ՝ դիտելու թանգարանը:

Ձեռքին ուլունքներից մանկական ապարանջան է: Դագաղի մեջ կար, հավանաբար, դեմքը ծածկող շալի կտոր, որի վրա մետաքսից և ոսկեթելից շքեղ ասեղնագործություն էր՝ վագր և առյուծ: Պահպանված է շատ լավ: Փայտե նույնատիպ աշխատանք: Հիասքանչ մի աշխատանք: Եվ, դատելով առյուծից և վագրից, եզրակացրինք, որ 11–րդ դար է: Շրջազգեստի հետ կապված վզնոցն անտանելի էր լվանալ, մաքրել, ինձ ահավոր տհաճ էր, ստիպված էի մսի և մաշկի կտորները պոկել գործվածքից: Դա տևեց վեց օր: Եվ բացի այդ կան գործվածքների կտորներ, որոնք պետք է դրվեն երկու ապակիների միջև: Հպարտությամբ հայտնում եմ նաև, որ վաղը կլրանա մեկ շաբաթը, ինչ մենք հանդիսավոր կերպով մեր նոր թանգարանի հիմքը դրեցինք: Նա դեռևս փոքրիկ է, կառուցվում է ճարտարապետ-նկարիչ Պոլտորացկու և ինժեներ-ճարտարապետ Օրբելու նախագծով» (Բունիաթյան, Մկրտչյան 2013, 242-243):

Անիի հնադարանը

1892 թ. ամռանը Ն. Մառը սկսեց հետախուզական առաջին պեղումները Հայաստանի միջնադարյան հռչակավոր մայրաքաղաք Անիում, որին մասնակցում էին թվով 16 բանվորներ: Պեղումները հենց սկզբից հրաշալի արդյունքներ տվեցին: Ձեռք բերված նյութերը արդեն Մառին հնարավորություն տվեցին պատկերացում կազմելու միջնադարյան Հայաստանի մշակութային վիթխարի հարստության մասին: Հաջորդ տարի նա պեղումները վերսկսեց Անիում: Ի հայտ բերված առարկաները Մառը 1893 թ. առաջարկեց պահպանել ու ցուցադրել Էջմիածնում այդ նպատակով հիմնվելիք թանգարանում: Այդ մասին ահա ինչ էր գրում Հովսեփ Օրբելին. «Անիի պեղումներից ի հայտ եկած առարկաների զետեղարանի հարցը Մառը բարձրացրել էր դեռևս 1893 թ., այդ նպատակի համար առաջարկված էր Էջմիածնում հիմնարկել մի թանգարան, որտեղ պետք է կենտրոնացվեին պատմական Հայաստանի սահմաններում գտնված բոլոր հնությունները: Ն. Մառի այդ միտքը համակրանքի չհանդիպեց բավարար չափով, և նա ստիպված էր դադարեցնել պեղումները, որովհետև ծայրաստիճան անցանկալի էր Անիի հնությունները տարբեր թանգարաններում ցրելը»: Նման պայմաններում Ն. Մառը պեղված նյութերը տանում էր Պետերբուրգ, և երբ նրան այդ կապակցությամբ մեղադրում էին, որ Հայաստանի հնությունները դուրս է տանում, նա պատճառաբանում էր, որ Հայաստանում համապատասխան թանգարաններ չկան, որոնց կարելի լիներ հանձնել պեղածո իրերը: Հնությունները տեղում պահելու հնարավորություն չունենալու պատճառով երկամյա աշխատանքներից հետո Մառը դադարեցրեց Անիի պեղումները: Պեղումները վերսկսվեցին 1904 թ.՝ այն բանից հետո, երբ հնարավոր դարձավ իրականացնել Մառի պահանջը՝ Անիում թանգարան հիմնելու մասին: Այդ հարցին անդրադարձել է Հ. Օրբելին Անիի հնադարանի գրքամատյանի առաջաբանում (Орбели, 1910):

Նա նշում էր, որ 1904 թ., երբ պեղումները վերսկսվել էին, Մառը կրկին հարց բարձրացրեց Անիում թանգարան հիմնելու մասին: Այդ նպատակով բժիշկ Հ. Ջավրիյանը Բաքվում՝ հայ հասարակության մեջ հանգանակություն կազմակերպեց և հավաքած 950 ռուբ. գումարը ուղարկեց Մառին, որն այն օգտագործեց Անիի հին

շենքերից մեկը թանգարանի վերածելու վրա: Ենթադրվում էր, որ այդ շենքը եղել էր Բագրատունյաց Աշոտ Ողորմած թագավորի պալատը, իսկ ոմանց կարծիքով էլ՝ Անիի մաքսատունը, որը հետագայում վեր էր ածվել մզկիթի և հայտնի էր «Մանուչեի մզկիթ» անունով: Հենց պեղումների ընթացքում ստեղծված Անիի հնադարանը բացառիկ նշանակություն ունեցավ նախախորհրդային ժամանակաշրջանում կազմակերպված հայկական թանգարանների շարքում: Մառի գլխավորած պեղումները Անիում հաջորդաբար շարունակվեցին մինչև 1917 թվականը:

Անիում կազմակերպված թանգարանի առաջին շենքը արագությամբ լցվում է թանգարանային արժեք ունեցող բազմաթիվ առարկաներով, գլխավորապես վիմական արձանագրություններով և ճարտարապետական բեկորներով: Անիում իրականացվող բոլոր աշխատանքները կատարվում էին մեծ պատասխանատվությամբ և գիտական բարձր մակարդակով: Յուրաքանչյուր տարի հրատարակվում էին կատարված աշխատանքների գիտական հաշվետվություններ՝ համապատասխան լուսանկարներով ու անհրաժեշտ չափագրություններով, որոնցում արտացոլվում էին նաև թանգարանային գործերը: 1906 թ. Պետերբուրգում երկու լեզվով՝ հայերեն ու ռուսերեն, լույս տեսավ Ն. Մառի կազմած Անիի հնադարանի համառոտ կատալոգը՝ մանրամասն տեղեկություններով: Համաձայն կատալոգի՝ թանգարանի հիմնական ցուցանմուշները կազմում էին արձանագրությունները, քանդակները, խոյակները, կավամանները, դրամները, զենքերի մնացորդները, ապակյա սրվակները, մետաղյա իրերը, այլ նյութեր: Չորս տարի անց՝ 1910 թ., հրատարակվեց Անիի թանգարանի մանրամասն գիտական կատալոգը, որի հեղինակն էր պեղումների մասնակից, Մառի օգնական Հովսեփ Օրբելին: Անիի թանգարանի նյութերի թվում էին արժեքավոր բազմաթիվ հնություններ, որոնց թվում՝ Գագիկ Առաջինի արձանը՝ Ս. Գրիգոր եկեղեցու մակետը ձեռքին, վիմական արձանագրություններ, ճարտարապետական մասունքներ, ճենապակյա, հախճապակյա, կավե անոթներ, ապակյա սրվակներ, ասեղնագործ հագուստների մնացորդներ ու պատառիկներ, եկեղեցական սպասք, խնկամաններ, խաչեր, աշտանակներ, կանթեղներ, արդուզարդի իրեր, զենքեր և այլն:

Շարունակվող պեղումների միջոցով ի հայտ բերված մեծաքանակ հնագիտական առարկաները այլևս անհնարին էին դարձնում դրանց ամփոփումը թանգարանի արդեն լցված նեղ սրահներում: 1907 թ. ծրագիր կազմվեց նոր և ավելի ընդարձակ թանգարան կառուցելու համար, բայց դրամական միջոցների սղության պատճառով 1908 թ. հուլիսի 15-ին հիմնադրվեց համեմատաբար ոչ մեծ թանգարանի նոր շենքը՝ Օրբելու և Պոլտորացկու նախագծով: 1908 թ. սեպտեմբերին Օրբելին գրում է. «Քնքուշ հարսիկ, վաղը կդառնա մեկ շաբաթ, որ մենք հանդիսավոր կերպով դրեցինք նոր թանգարանի հիմքը: Այն առայժմ փոքր է, կառուցվում է ճարտարապետ Պոլտարացկու և ինժեներ Օրբելու նախագծով» (Բունիաթյան, Մկրտչյան 2013, 238-240):

Կառուցումն ավարտվում է 1909 թ. գարնանը, իսկ պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1909 թ. օգոստոսի 20-ին: Այդ շենքը կառուցվեց Պետերբուրգի հայ համայնքի և եկեղեցիների՝ 700 ռուբլի և Բաքվի նավթարդյունաբերողներ Մանթաշյանի (1000 ռուբլի) և Ղուկասյանի (1000 ռուբլի) նվիրաբերած գումարներով:

Եղան ոչ մեծ նվիրատվություններ ևս: Մառը մի առանձին ջերմեռանդությամբ է գրում Անիի շրջանի գյուղացիներից մեկի մասին, որը, թանգարանով հիացած, նվիրում է իր խնայած 10 ռուբլին:

Այդպիսով, Անիի հնադարանն ամփոփվում է երեք շենքում: Առաջինը միջնադարյանն էր՝ Մանուչեի մզկիթը, որում եղած նյութերի մի մասը տեղափոխվում է թանգարանի նորակառույց երկրորդ շենքը: Առաջինում պահվում էին գլխավորապես մանր առարկաները՝ որմնազարդեր, շենքերի ներքին հարդարանքի բեկորներ, փորագիր փայտե առարկաներ, նկարազարդ որմնամասեր, շքաղյուսներ, դամբարանային իրեր՝ կավանոթներ, հախճապակյա և ճենապակյա անոթներ, ապակյա առարկաներ, բանվածքների և ասեղնագործ առարկաների մնացորդներ, դրամների ժողովածուներ, սնդիկի ամաններ, եկեղեցական անոթներ, խաչեր, կանթեղներ, բուրվառներ, աշտանակներ և արդուզարդի բազմաթիվ առարկաներ, որոնց մանրամասն ցուցակը կազմել և հրատարակել է Հովսեփ Օրբելին (Օրբելի 1911): Այդ շենքում էր ցուցադրված նաև Գագիկ Ա Բագրատունու արձանը՝ բոլորակ Սուրբ Գրիգոր եկեղեցու կաղապարը ձեռքին:

Թանգարանի նոր շենքը շատ ավելի հարմարավետ էր մինչ այդ ստեղծված հայկական թանգարաններից: Այն ցուցասրահներից բացի՝ ուներ նաև գտածո իրերի մաքրման-վերականգնման և լուսանկարչական լաբորատորիաներ, գրադարան, գիտաշխատողների կաբինետ, այլ հարմարություններ: Թանգարանի երկրորդ նորակառույց շենքում Մառը կենտրոնացրեց արժեքավոր վիմական արձանագրությունները, ճարտարապետական բեկորները, խաչքարերը, այլ առարկաներ: 1912 թ. վերանորոգվեց Անիի բոլորակ Փրկիչ եկեղեցին և նույնպես վերածվեց հնադարանի, որի մեջ հավաքվեցին բազմաթիվ քարաբեկորներ: Սակայն այդ երեք շենքերը ևս չէին ապահովում օրեցօր հայտնաբերվող առարկաների պահպանությունը: Անին իր ամբողջության մեջ ինքնին մի թանգարան էր, որը պահպանության և հանրաճանաչման ամենախնամ կարիք ուներ (Ամիրյան 2023, 49-52): Այնտեղ համեմատաբար կարճ ժամանակում հաջողվում է արդեն Անիի կյանքը բնորոշելու համար հավաքել շատ բան:

Հանդերձների մաս կազմող կարևոր իրերը գտնվել էին 1908 թ.: Գտնվել էր մետաքսյա ամբողջ հագուստ՝ ոսկե գործվածքներով ու մետաքսով, ոսկե նուրբ հյուսած քող, մետաքսյա ժապավենից գոտի և Հոնենց Տիգրանի ազգական փոքրիկ արքայադստեր մի քանի մանր բաներ:

Շատ էին պղնձե և բրոնզե ապարանջանները, օղերն ու մատանիները՝ գտնված Անիի ուրիշ վայրերի պեղումների ժամանակ:

Օրբելին նշում է. «Պատերազմական զգեստի միակ մնացորդը կաշվե շապիկն է, որը քաշված է եղել ոսկու և արծաթի թելերով շատ լավ գործված զրահի վրա: Ձենքերի առարկաները շատ չեն: Մի մեծ սուր 11-12-րդ դարերի, եռաժանի տեգ հանգույցներով նույն ժամանակի, մի քանի նիզակների ծայրեր, 750-ից ավելի սլաքների ծայրեր (5 եթե ոչ ավելի տեսակ), վերջապես 2 քորոց իրենց գլխով: Պատերազմական տեսակետից հետաքրքրական է 1910 թ. Աշոտի պարսպի մոտ գտնված մի նիզակավորի կմախքը: Նա ոտքից վիրավորված է եղել երկաթյա զենքով, նրա մահը առաջ է եկել քարե գնդակից, որը փշրել է գանգի կեսը և մնացել

մեջը և ի լրումն այս ամենի զինվորը խաշվել է եռման հեղուկով: Սա երկրորդ գտածոն է Անիում, որ մարդը թաղված է իր կյանքը խլած զենքերի հետ: 1908 թ. Միջնաբերդում գտնվել է մի շատ երիտասարդ մարդու (գուցե և կնոջ) գանգ, որի մեջ մնացել է տեգի ծայրը և ճակատի ոսկրի վրա ունի խորը կտրվածք: Հավանական է, որ շատ զենքեր կգտնվեն Սմբատի պարիսպների տակ, մանավանդ այն աշտարակների, որոնք վաղուց արդեն փուլ են եկել» (Օրբելի 1911, 47-48):

Անիում ամենից շատ գտնված իրերը անոթների մնացորդներն էին: Անիի թանգարանը կարող էր պարծենալ իր խեցեղենի հավաքածուով: Կային խեցեղենի բոլոր տեսակները՝ սովորականներից մինչև հախճապակի: Հասարակ կավե ամանների մեջ առանձին հետաքրքրական էին գոտեզարդ կարասները՝ երկրաչափական նախշերով, կենդանիների պատկերներով և ոչ միայն կենցաղային, այլ շատ բազմազան տեսարաններով: 1910 թ. գտնվել էր նույնիսկ կարասի վերնամասը՝ գոտեզարդով և զույգ խոշոր առյուծների կոպիտ պատկերներով:

Զարմանալի էին հախճապակյա ամանները՝ թափանցիկ կողերով, ուռուցիկ ու խոր գծած նկարներով և ճենապակուց ամանները՝ հարուստ և բազմազան ոսկեզօծ նկարներով՝ նույնպես ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով (օրնամենտ): Դրանք գտնվել էին թագավորական ապարանքի պեղումներից: Գտնված ամանների, խեցիների թիվը հասնում էր արդեն մի քանի հազարների: «1910 թ. պեղումները տվեցին մեծ թվով նույնպիսի ամաններ, 14 ամբողջ և 250 կոտրված: Այժմ Անիի այդ ամանների ժողովածուն (24 ամբողջ և 600 բեկորներ) ամենահարուստներից մեկն է և գեղեցիկ նյութ է տալիս նրանց նշանակությունը հետազոտելու, նույնպես և այդ առարկաների ինքնատիպ շինվածքի և տեղի համար: Անկասկած դրանք Անիում են շինվել, թեև հիմք չկա այդ առարկաների ծագումը բացառապես Անիինը համարել» (Օրբելի 1911, 49):

Եկեղեցական առարկաներից կային մի քանի արժեքավոր իրեր: Դրանց մեջ առաջին տեղը զբաղեցնում էր պղնձյա մեծ ջահը (11-րդ դար) Գագիկի տաճարից, թագի ձևով, չորս կողմից թռչող աղավնաձև ճրագակալներով և թագի մեջտեղում բարդ մի ղամբարով: Այս ջահը ուներ մոտ 120 գույնզգույն ապակյա ղամբարներ, որոնք, մեծ մասամբ գտնվել էին, բայց բոլորը կոտրված: Իր հորինվածքով և ոճով ջահը մի բացառիկություն էր: Կային շատ հետաքրքրական բուրվառներ և կանթեղներ (Գագիկի տաճարից)՝ երկու պղնձյա կռածո շարժական աշտանակներով: Ամենաշատը գտնվել էին առօրյա և պղնձյա խաչեր՝ ամբողջական և կոտրված, հասարակ և ավելի բարդ գեղարվեստական ոճերով:

Արժե հիշատակել մի քանի առարկաներ էլ, որոնք վերաբերում էին քաղաքի առևտրական ու արդյունաբերական կյանքին: Այստեղ կային բազմաթիվ քարե ծանրաչափեր, հյուսնության տարբեր գործիքներ: 1907 թ. գտնվեցին նաև պղնձյա մանր իրերի ու զարդերի ամբողջական մնացորդներ: Վերջին պեղումները նույնպես տվեցին դրա վերաբերյալ հետաքրքրական նյութեր: Հայտնաբերվեց աղյուս թափելու արհեստանոց՝ կիրառության պատրաստի և անպատրաստ առարկաներով: Մանավանդ արժեքավոր պետք էր համարել քարե գլանակի մասերը, որով տպվում և դրոշմվում էին կավե մեծ կարասների գոտիների նկարազարդերը: Դա արժեքավոր է հատկապես նրանով, որ այդ գործիքը անկասկած ապացուցում էր

հայկական ինքնության ամաններ շինելու ձևն ու տեղը, ամաններ, որ Անիում մեծ քանակությամբ էին գտնվում:

Վերջապես նաև Անիի երկրագործ դասը թողել էր մի քանի խոփեր, արորներ, գերանդիներ, կալսելու գործիքներ:

Օրբելին նշում է, որ բոլոր հիշատակված առարկաները պահվում էին թանգարանի առաջին մասում, որը զետեղված էր Մանուչեի մզկիթում:

Երկրորդ բաժանմունքը, որ գտնվում էր հատուկ շինության մեջ, բովանդակում էր ճարտարապետական մասեր, քանդակավոր քարեր, խաչքարեր, նաև արձանագրություններ: Մանավանդ արձանագրությունները Անիում շատ էին, գլխավորապես հայերեն, կային նաև արաբերեն և պարսկերեն: Այս ուղղությամբ պեղումները երևան են հանել նոր հարուստ նյութեր: Թանգարանում պատվավոր տեղ էին գրավում հունարեն արձանագրությունները 1907 և 1908 թթ. պեղումներից գտնված և Աբու-Սայիդի ընդարձակ արձանագրությունը 14-րդ դարի սկզբի՝ գտնված 1908 թ., որտեղ հիշատակվում է անեցիների մի քանի հարկերի վերացման մասին: Պետք է հիշել հատկապես 1910 թ. գտնված թանկագին գտածոն՝ վրացերեն արձանագրությունը: Վերաբերելով Անիի ծաղկուն ժամանակին (1218 թ.), թեև արդեն ոչ մայրաքաղաքի, այն լուսաբանում է քաղկեդոնական մասի բնակիչների հարաբերությունները հոգևորականության հետ: Այն Անիի քաղկեդոնականության մասին ընդհանրապես նոր նյութ է տալիս և բնորոշում է տեղական իշխանության նշանակությունը: Վրաց Եպիփան կաթողիկոսի այս հրովարտակի տակ կա տեղական հոգևոր և աշխարհիկ իշխանությունների վավերացումը: Այս արձանագրության գիտական նշանակությունը շատ մեծ է և բազմազան:

Թանգարանի երրորդ բաժանմունքի ամենալավ զարդը, որը միանգամից գրավում էր մտնողի ուշադրությունը (ինչպես առաջին բաժանմունքում Գագիկի արձանը), մեծ սալն էր, մի հեծյալի և երկու հետևակների ուռուցիկ քանդակապատկերով: Գեղարվեստի գերազանց նմուշ էր այն. հատկապես հետաքրքրական էր ձիու քանդակը, որը հավանաբար վերաբերում էր Կամսարականների տիրապետության ժամանակաշրջանին:

Բայց Անիի պեղումների գլխավոր հետևանքը այս բոլոր գտածոները, մանր իրերը և քարե հիշատակությունները չէին, այլ այն անվիճելի հանգամանքը, որ չի կարելի Անիի մասին դատել միայն երկրի երեսին գտնված փոքրաթիվ իրերով, այլ պետք է շատ հետազոտել և փորել, որպեսզի ներկայացվի Անին այնպես՝ ինչպիսին էր իրականում: Այդ դժվարին գործը պետք է համակարգեր Անիի հնագիտական ինստիտուտը: Մառը Անիի հնագիտական ինստիտուտի մասին իր զեկույցում ասել է. «Կովկասի պարծանքը նրա այն զարդերն են ու գանձերը, որոնցով օժտել է նրան բնությունը, նրանցից լավագույններին հավասար Կովկասը կարող է պարծենալ երկնքի մի մշակութային պարգևով էլ՝ Անիի ավերակներով, հնագիտական պսակի իր այդ խոշոր մարգարիտով» (Օրբելի 1911, 53-54):

Հովսեփ Օրբելին հանգամանորեն ուսումնասիրեց ավերակ քաղաքը և նրա հուշարձանները: Նրան բազմաթիվ անգամ հարկ է լինում բացատրություններ տալ անթիվ այցելուների, այնպես, որ նա լիովին տիրապետում էր պեղված և պեղ-

ման ենթակա կառույցների ցուցադրման մեթոդիկային, հայտնաբերում էր առավել հարմար ուղերթեր և այլն:

Նա կազմեց ուղեցույցը, որը իր մատչելիության բնույթով հաղորդում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հայկական մայրաքաղաքի անցյալի հուշարձանների մասին: Ի սկզբանե նախատեսված լինելով որպես իրազեկ ուղեցույց, այն պարունակում էր նաև Անիի հնությունների գիտական նկարագրությունը: Այստեղ մենք տեսնում ենք ապագա գիտնականի համարձակորեն արտահայտած սեփական կարծիքը:

Գիտական առավել մեծ նշանակություն է ներկայացնում նրա կազմած Անիի թանգարանի կատալոգը (Орбели 1910): Օրբելին շարադրում է 1892-1909 թթ. կատարված պեղումների պատմությունը: Այստեղ ներկայացվում են թանգարանի առաջին բաժանմունքի առարկաները: Վարպետորեն նկարագրվում է Գագիկ թագավորի արձանը՝ պեղված 1906 թ. արձանի ձեռքում գտնվող կլոր տաճարի մոդելը, մանկական տապանը և նրանում գտնված 5-6 տարեկան աղջնակ-իշխանուհու հանդերձը, որը իրենից ներկայացնում է 13-րդ դարի սկզբների Անիի ունևոր դասակարգի զգեստների ուրվագիծը:

Օրբելին պատրաստեց և «Անիի շարքում» հրատարակեց պեղվող քաղաքի ուղեցույցը, ապա կազմեց հնադարանում պահվող նյութերի գիտական ցուցակը, հավաքեց ու հրատարակեց Անիի արձանագրությունները, իսկ ամփոփելով ողջ գիտելիքը, որը կուտակել էր Անիի պատմության և նրա հուշարձանների վերաբերյալ, հրատարակեց ևս մեկ հանրամատչելի գրքույկ՝ «Անիի ավերակները» վերնագրով, որի վաճառքից գոյացած ամբողջ եկամուտը Օրբելին տվեց հօգուտ Անիի հնությունների թանգարանի:

Օրբելու հրատարակած ուսումնասիրությունները չեն կորցրել իրենց նշանակությունն ու արդիականությունը և հանդիսանում են Անիի և նրա հնությունների ուսումնասիրման համար որպես սկզբնաղբյուր: Աշխատանքի ներածականում Մառը նշում է, որ գրքի հրատարակմանը ներգրավել է այդ գործին առավել մոտիկ կանգնած, այդ աշխատության համար առավել հեղինակավոր, իր ամենամերձավոր աշխատակից պրոֆեսոր Հ. Օրբելին: Մառի հաշվետվությունները և նրա հայտնի «Անի» (Марр 1934, 11-12) մենագրությունը ունեն չափազանց յուրահատուկ արժեք. Հովսեփ Օրբելու աշխատանքը և ճիշտ նկարագրությունները ձեռք են բերում յուրահատուկ արժեք՝ լրացնելով այն բացը, որն առաջացավ նյութական մշակույթի խիստ արժեքավոր այդ հուշարձանների կորստի հետևանքով:

Մառը ցանկանում էր Անին դարձնել Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունների կենտրոն: Դեռևս 1909 թ. հանդես գալով Ռուսաստանի կայսերական ակադեմիայի նիստերից մեկում՝ նա, նկատի առնելով Անիի պատմահնագիտական ու ճարտարապետական արժեքը, առաջարկում էր այստեղ հիմնել հնագիտության ինստիտուտ, որը պետք է գիտական կենտրոն դառնար ամբողջ Կովկասի ու Առաջավոր Ասիայի ուսումնասիրության համար:

Ցավոք, պատմական ողբերգական դեպքերն արգելք հանդիսացան Մառի և նրա աշակերտների երազանքի՝ «Անիի հնագիտական ինստիտուտի» կազմակերպման համար: 1914 թ. համաշխարհային պատերազմը խանգարեց այդ ծրագրի իրագործմանը: «1918 թ. թուրքերը ներխուժեցին Անի և գրեթե ամբողջությամբ ոչնչացրին

մասունք առ մասունք Մառի ու նրա համախոհ գործընկերների՝ հայ ժողովրդի բարոյական ու նյութական օժանդակությամբ, այնքան դժվարությամբ հավաքած Անիի թանգարանային անգնահատելի արժեքները: Այսպիսի վախճան ունեցավ Անիի հնադարանը: Փրկվեց առարկաների միայն մի չնչին մասը: Երբ թուրքերը արշավում էին Անի, պեղումների մասնակից, հնագետ Աշխարհիբեկ Քալանթարը մի քանի զինվորների և հետագայում բազմավաստակ ուսուցիչ Հովսեփ Գալստյանի հետ, զենքերը ձեռքներին, թշնամու գնդակների տարափի տակ Անիի հնադարանի իրերի մի մասը փոխադրեցին Խարկով գյուղը, ապա՝ Սանահին՝ փրկելով կորստից: Այդ առարկաները մինչև 1926 թվականը պահվում էին Սանահնի վանքում, իսկ հետո հանձնվեցին Խորհրդային Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանին: Անիի հնադարանի կորստից փրկված առարկաների թիվը 2344 է, որոնք գրանցված են Հայաստանի պատմության պետական թանգարանի 1621 համարների տակ: Անիի այդ հավաքածուն Դվինի հարուստ նյութերի և մի քանի այլ հնավայրերի պեղումներից գտնված հավաքածուների հետ միասին միջնադարյան Հայաստանի բարձր մշակույթի վկաներն են, որոնք այսօր պահպանվում և ցուցադրվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում» (Ամիրյան 2023, 52):

«…Բայց ամենածանր կորուստը, որ ունեցանք մենք, մեր հնագիտական հարստությունը, ամենամեծ հարվածը, որ հասավ գիտությանը, դա գիտական Անիի կործանումն էր՝ պրոֆ. Մառի 16-ամյա գիտական աշխատանքի արդյունքը», - դառնությամբ գրում է Քալանթարը: Սա դեռ ամենը չէր. Անիի հնագիտական ժառանգությանը ծանր հարված հասցվեց հատկապես 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ. «Թալանն ու քարուքանդն Անիում տեղի է ունեցել մի քանի նվագ: Նախ՝ բնակելի տների վերաբերմամբ՝ Անին գրավելու առաջին շրջանում, իսկ ապա հնադարաններինը (1919-ի ապրիլ-մայիս), որ կատարել է թուրք և քուրդ խուժանը», - գրում է Քալանթարը (Բայրամյան 2023, 284-285):

Շատ տարիներ անց Հ. Օրբելին այդ մասին դառնությամբ ու զայրույթով գրեց. «Կովկասյան ռազմաճակատի թիկունքում թափառող ավազակախմբերի կողմից Անիի թանգարանի և Անիի գիտական բազայի ավերումը, Անիի հավաքածուների և արխիվային նյութերի էվակուացման անշնորհք իրականացումը, վագոնները բախտի քմահաճույքին թողնելու պատասխանատու անձի անօրինակ թեթևամտությունը, այն վագոնների, որոնց մեջ Կովկաս, անժամանակ ստեղծված Կովկասյան ինստիտուտ էին ուղարկվում արխիվային նյութեր, ֆոտոնկարներ, գծանկարներ և այլ փաստաթղթեր Պետերբուրգից (1917թ. հոկտեմբերի վերջ), հանգեցրեց նրան, որ Մառի ու նրա դպրոցի կողմից կուտակված և ստեղծված գիտական հարստության զգալի մասը ոչնչացավ: Անվնաս մնացին միայն առանձին կտորներ և այն թերթիկները, որոնցից տարիներ շարունակ օգտվում էր Մառը: Անվնաս Երևան է հասցվել նաև Անիի հնագիտական հավաքածուների շատ չնչին մասը, որը բառիս բուն իմաստով Անիից դուրս է բերվել հրացանների կրակոցների տակ» (Յուզբաշյան 1971, 28-29):

Հայաստանի առաջին հանրապետության կրթության նախարարությունը 1919 թ. օգոստոսի 31-ին դիմել է Վրաստանի արտաքին գործերի նախարարին՝ Թիֆլիսի կովկասյան թանգարանում պահպանվող հայկական հնությունները Հա-

յաստանին հանձնելու համար: Սակայն, Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերից հետո պատմական Անի մայրաքաղաքը հանձնվեց Թուրքիային, որտեղ վերջին տարիներին պեղում են թուրք հնագետները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

ՎՐՈՒՅՐ 1964 – Վրույր Ա., *Անիում*, Երևան, Հայպետհրատ, 1964:

ՕՐԲԵԼԻ 1911 – Օրբելի Հ., *Անիոյ ավերակները*, Վաղարշապատ, 1911:

ՕՐԲԵԼԻ, ԱՌԱՔԵԼՅԱՆ 1965 - Օրբելի Հ.Ա., Առաքելյան Բ.Ն., *Դիվան հայ վիմագրության*, Պ. 1. Անի քաղաք, Հնագիտ. և ազգագր. ինստ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965:

МАРР 1934 - Марр Н.Я., *Ани, книжная история города и раскопки на месте городища*, М-Л., 1934.

ОРБЕЛИ 1910 - Орбели И. А., *Каталог армянского музея древностей*, Армянская серия, N 3, СПб., 1910.

ОРБЕЛИ 1911 – Орбели И. А., *Развалины Ани*, Издание журнал Нева, С. Петербург, 1911.

Ուսումնասիրություններ

ԱՄԻՐՅԱՆ 2023 – Ամիրյան Ս., *Թանգարանագիտություն*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023:

ԲԱՅՐԱՄՅԱՆ 2023 – Բայրամյան Կ., Աշխարհբեկ Քալանթարի գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիների, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան 2023, 281-291, https://arar.sci.am/dlibra/publication/388061/edition/358939?language=en :

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ, ՄԿՐՏՉՅԱՆ – Բունիաթյան Մ., Մկրտչյան Գ., *Էջեր Օրբելիների ընտանիքի կյանքից*, Նամակներ 1894-1931, Երևան 2013:

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ 1971 - Յուզբաշյան Կ. Ն., *Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1971:

Mariam Ohanyan

"House-Museum of Brothers Orbeli" SNCO
orbelimuseum@mail.ru

HOVSEP ORBELI'S PARTICIPATION IN ARCHAEOLOGICAL EXCAVATIONS IN ANI. THE ANI MUSEUM OF ANTIQUITIES

Keywords: Hovsep Orbeli, capital Ani, the Kingdom of Bagratuni, archaeology, Ani excavations, Ani museum, museology.

In the history of the Armenian people, Ani has had invaluable significance as a unique example of medieval culture, as an important cradle for the formation and development of urban, secular, and ecclesiastical architecture and culture. This rare museum of medieval Armenian culture, long recognized by the scientific world, is currently outside the borders of Armenia but continues to be an integral part of the Armenian people's cultural heritage.

Our work dedicated to Ani aims to shed as much light as possible on the cultural image of this site, which holds such significant importance in the historical past of the Armenian people, and on the work of Hovsep Orbeli, which shaped Orbeli as an archaeologist and

showcased his exceptional abilities in organizing museum activities. Therefore, in this regard, we consider it very important to value the historical, cultural, and civilizational role of the ancient capital of the Armenians, to further study the Ani heritage, and to present it to the Armenian and global public.

The goal of the study is to present Ani's archaeological heritage, the eminent scholar's activities during the Ani excavations, and the foundational work of the Ani museum, as one of the first Armenian museums, which laid the groundwork for the subsequent organization of museum activities in Armenia.

Мариам Оганян

"Дом-Музей Братьев Орбели" ГНКО

orbelimuseum@mail.ru

УЧАСТИЕ ИОСИФА ОРБЕЛИ В АРХЕОЛОГИЧЕСКИХ РАСКОПКАХ АНИ. АНИЙСКИЙ МУЗЕЙ ДРЕВНОСТЕЙ

Ключевые слова: Иосиф Орбели, столица Ани, Багратидское государство, археология, Анийские раскопки, Анийский музей древностей, музееведение.

В истории армянского народа Ани имела неоценимое значение как особый образец средневековой культуры, как важная колыбель становления и развития городской, светской и церковной архитектуры, культуры. Этот редкий музей средневековой армянской культуры, давно признанный научным миром, в настоящее время находится за пределами Армении, но продолжает оставаться неотъемлемой частью культурного наследия армянского народа.

Наша работа, посвященная Ани, направлена на максимальное освещение культурного образа этого очага, имеющего столь важное значение в историческом прошлом армянского народа, и деятельность Иосифа Орбели, сформировавшей его как археолога и где проявились его исключительные способности к организации музейной работы.

Поэтому в этой связи мы считаем очень важным оценить историческую, культурную и цивилизационную роль древней армянской столицы, продолжить изучение Анийского наследия и представить его армянскому и мировому обществу.

Цель исследования – представить археологическое наследие Ани, деятельность известного ученого во время экспедиции в Ани, фундаментальные работы музея Анийского древностей как одного из первых армянских музеев, что послужило основой для организации дальнейших музейных работ в Армении.